



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Հոգեգալուս

9 ՅՈՒՆԻՍ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ողորմութեան Կանչ Մը	Էջ 3
Ծանուցում	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԷՆ (2.1-21)

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խռնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՞նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով

եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Զէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փռիւզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրեացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ. –

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն

է Զովէլի մարգարէութեան որ կ'ըսէ.

“Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, – կ'ըսէ Աստուած, – իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ.

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուն եւ աղախիններուն վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծովով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ ահեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի”»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(14.25-31)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. –
«Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի ղրկէ իմ անուանովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ

յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ

իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է:

մի՛ վախճաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն»:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող

ընտանիքները,

թող բարեհաճին դիմել

Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի,

հեռաձայնելով

514 909 5203 թիւին:



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔՆԵՐ ԾԵՆՐԱԻՆ

ՀԵՌԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՈՒՍԵԱՆՆԵՐ

Սոյն աղօթքը արդէն իսկ լոյս տեսած է նոյն այս թերթիկին մէջ, որպէս առանձին աղօթք: Չայն վերստին կը տպենք յարգելու համար աղօթաշարքի հարազատ յաջորդականութիւնը:

ՃԱՄԲԱՆ ԴԷՊԻ ՔԵՉ

Լսէ, ով Տէր, աղօթքներս: Ականջ տուր հետդ ըլլալու, տանդ մէջ բնակելու իղձիս եւ թոյլ տալու՝ որ ամբողջ էութիւնս ներկայութեամբդ լիանայ: Քանի ասոնցմէ որեւէ մէկը կարելի չէ առանց Քեզի: Երբ Դուն չես զիս լիացնողը, շուտով զիս Քեզմէ բաժնող ու Քեզմէ հեռացնող անկերջ մտքերով ու հոգերով կը լեցուիմ: Նոյնիսկ Քու մասիդ մտածումներ, լաւ հոգեւոր մտածումներ, կրնան ցրուել զիս՝ երբ Դուն չես անոնց հեղինակը:

Ով Տէր, Քու մասիդ մտածել, հմայուած ըլլալ սատուածաբանական մտքերով ու գրոյցներով, հետաքրքրուած ըլլալ Քրիստոնէական հոգեկանութեան (spirituality) պատմութեամբ եւ դրդուած՝ աղօթքի եւ խոկումի մասին մտածումներէ ու գաղափարներէ, այս բոլորը ազահողութեան այնքան արտայայտութիւն կրնան ըլլալ՝ որքան անսանձ ցանկութիւնը ունեւորի, ինչքի, կամ ուժի:

Ամէն օր նորէն կը տեսնեմ, թէ միայն Դուն

կրնաս ինծի աղօթել տրովեցնել, միայն Դուն կրնաս սիրտս հանգստացնել, միայն Դուն կրնաս թոյլ տալ ինծի, որ ներկայութեանդ մէջ կենամ: Ոչ մէկ գիրք, ոչ մէկ գաղափար, ոչ մէկ յղացք կամ տեսութիւն զիս Քեզի պիտի մօտեցնէ, եթէ Դուն թոյլ չտաս որ ատիկա դառնայ ճամբան դէպի Քեզ:

Բայց Տէր, թոյլ տուր ինծի, որ գոնէ ընդունակ ըլլամ Քու նախաձեռնումիդ. համբերութեամբ եւ ուշադրութեամբ սպասեմ այն ժամուն, երբ պիտի գաս ու խորտակելով անցնիս կառուցած բոլոր պատերս: Ով Տէր, ինծի աղօթել տրովեցուր: Ամէն:
(Շարունակելի 9)

ՀՐԲԱՆԴՆԵՐՈՒՆ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել

Արժ. Տ. Գառնիկ

Ա. Քինյ. Գոյունեանի.

514 909 5203 թիփն:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

ՁԵՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՆԱԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՃԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ

ԵԿԵՂԵՃՈՂ ԴՐԻԱՆԱՏՈՒՆ:

ԹԵՐԹԻԿԻ ՆԱԽՈՐԴ ԹԻԲԵՐՈՒ

ԿՐԱՔԲ ԳՏՆԵԼ

www.sourphagop.net

ԿԱՅԲԷՁԻՆ ՎՐԱՅ

Սոյն թերթիկը Ե-ՆԱԿԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ

ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՂԱՐԿԵՃԷՔ

eglise@sourphagop.net





ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐԾ. Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՇԱԲԹՈՒԱՆ ԱՌԹԻ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
ԵՆ

Սուրբ Գեորգ Եկեղեցի
Կը ներկայացնեն

Երեքշաբթի 11 Յունիս 2019, ժամը 19.30
Ս. Յակոբ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ
Երեկոյեան ժամերգութիւն, եւ
«Ս. Պատարագի Բացատրութիւն»՝
Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Գեաղայեան



Հինգշաբթի 13 Յունիս 2019, ժամը 19.30
Լաւալի Հայ Կեդրոնի «Պարոնեան» սրահ
Ֆիլմի ցուցադրութիւն
Եւ զրոյց՝
Բրշ. Կարօ Սրկ. Նոյսուտեան

Ուրբաթ 15 Յունիս 2019,
ժամը 19.30
Ս. Գեորգ Եկեղեցի
«Հոգեւոր Մարզանք՝ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ»՝
Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Գեաղայեան



ԿԻՐԱԿԻ 16 ՅՈՒՆԻՍ 2019
Առաւօտեան Ս. Պատարագի ընթացքին **երիտասարդներու օրհնութիւն**

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՅԻՆԵՐԸ ՀՐԱԴԻՐՈՒԱԾ ԵՆ